

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX– XX դարերում, Ե., Ոսկան Երևանցի, 2009, 292 էջ, 192 էջ նկար:

XIX-XX դարերի հայ կերպարվեստը հարուստ մատենագիտություն ունի: Նրա առանձին տեսակներին, ժանրերին, հիմնահարցերին և վարպետներին նվիրված գրականությունը կազմում է ստվար մի ցանկ, որը համալրվում է տարեցտարի՝ տարբեր «ձևաչափերով» մենագրություններ և ալբոմներ, տեղեկատու և ընդհանրացնող հրատարակություններ, թեմատիկ ժողովածուներ և կատալոգներ, գիտական հոդվածներ և զեկուցումներ: Այսուհանդերձ, մինչ օրս չենք ունեցել բացառապես այս շրջանին վերաբերող հիմնարար ուսումնասիրություն, որը ոչ միայն ի մի կբերեր տվյալ բնագավառում կուտակված տեսական մեծ փորձը, այլև նոր, օբյեկտիվ լույս կսփռեր հայ նոր և նորագույն կերպարվեստի պատմության առանցքային խնդիրների վրա:

Այդ բացն է լրացնում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արարատ Աղաայանի մենագրությունը, որը հրատարակվել է ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանի ընդհանուր խմբագրությամբ: Աշխատությունը գրախոսել են ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Հասրայանը, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանը: Հետազոտության հեղինակը XIX-XX դդ. հայ կերպարվեստի լավագույն գիտականներից է, որը տարիներ շարունակ լրջորեն ուսումնասիրել է այդ ժամանակաշրջանի գեղարվեստական ժառանգությունը, լույս ընծայել դրան վերաբերող մի քանի տասնյակ գիտական հրատարակումներ, ներառյալ մենագրություններ: Գիրքը հանրագումարի է բերում Ա. Աղաայանի երկարամյա մասնագիտական գործունեությունը տվյալ բնագավառում և այդ իսկ պատճառով մեծ հետաքրքրություն ներկայացնում:

Աշխատությունը գրվել է ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի, Վրաստանի, արտերկրի թանգարաններում և մասնավոր հավաքածուներում պահվող հսկայածավալ պատմագեղարվեստական նյութի, գիտական և տեղեկատու գրականության, պարբերականների, ինչպես նաև արխիվային և անտիպ աղբյուրների համակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրության շնորհիվ: Այն ունի համապարփակ բնույթ՝ ընդգրկելով կերպարվեստի բոլոր հիմնական տեսակները (գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն, բեմանկարչություն): Հետազոտությունը խարըսխվում է մեթոդաբանական ամուր հիմքի վրա: Հեղինակը նախընտրել է պատմականության գիտական սկզբունքը՝ զուգահեռաբար դիմելով վերլուծության պատմահամեմատական, կազմաբանական, ձևաբանական, կառուցվածքային, պատկերագրական և պատկերաբանական եղանակներին: Ուսումնասիրության կառուցվածքը բխում է թեմայի բնույթից և առանձնահատկություններից: Այն բաղկացած է առաջաբանից, երկու հիմնական բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը տրոհվում է առանձին գլուխների, ենթագլուխների և պարագրաֆների, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Բաժիններն ու գլուխները ձևավորված են ժամանակագրական սկզբունքով, ենթագլուխներն ու պարագրաֆները՝ ըստ կերպարվեստի տեսակների ու ենթատեսակների:

Աշխատության առաջին բաժինը նվիրված է XIX դ. և XX դ. առաջին երկու տասնամյակների հայ կերպարվեստի պատմությանը: Հեղինակը մանրամասնորեն դիտարկել է դրա ձևավորման (1830-1860-ական թթ.) և զարգացման (1870-1918 թթ.) շրջանները, ինչպես նաև Հայաստանի Առաջին հանրապետության (1918-1920 թթ.) գեղարվեստական կյանքը՝ առաջին անգամ միմյանցից զատելով արևելահայ և արևմտահայ կերպարվեստը, որը կարճատև զարթոնք է ապրել Օսմանյան Թուրքիայի բարենորոգումների՝ այսպես կոչված «թանգիմաթի» (1839-1876 թթ.) ժամանակահատվածում: Կենսագրական սուղ տվյալների, զանազան աղբյուրներից քաղած սակավաթիվ տեղեկությունների հիման վրա ներկայացված են նկարիչներ կրտսեր Մանասների, Հ. Պեյզատի, Ա. Սաքանյանի, Պ. Սրապյանի, Մ. Մարկոսյանի, Հ. Սագրգյանի, Մ. Տիրացույանի, Մ. Պեզիրճյանի և այլոց՝ մեզանում քիչ հայտնի, գրեթե անհայտ ստեղծագործությունները:

Ինչ վերաբերում է նույն ժամանակաշրջանի արևելահայ կերպարվեստին, ապա սրա ակունքներում են, ինչպես ցույց է տալիս հետազոտողը, մեզ առավել ծանոթ, 1830-1840-ական թթ. ասպարեզ եկած արվեստագետներ Հ. և Ա. Հովնաթանյանները, Մ. Ներսիսյանը, Հ. Քաթանյանը, որոնց գործունեությունը ծավալվել է գլխավորապես գեղանկարչության ասպարեզում: Սկսած 1870-ական թթ.՝ ազգային գեղարվեստական կյանքի բեմահարթակ են դուրս գալիս հայ անդրանիկ քանդակագործներ Ե. Ոսկանը, Հ. Արապյանը, Ա. Տեր-Մարտիչյանը, Հ. Բադիկյանը, Ջ. Փափազյանը, Մ. Միքայելյանը, Հ. Գյուրջյանը, Ջ. Բեյուքյանը: Զուգահեռաբար ընդլայնվում է ազգային գեղանկարչության ժանրաթեմատիկ խաղացանկը, դրա աշխարհագրությունը: Հայ նկարիչներն ու քանդակագործները հնարավորություն են ստանում մասնագիտանալու ոչ միայն Ռուսաստանի, այլև եվրոպական երկրների գեղարվեստական կրթօջախներում:

Ելնելով այն իրողությունից, որ XIX դարում և XX դարի առաջին երկու տասնամյակներում հայ կերպարվեստը պատմական հանգամանքների բերումով զարգացել է հիմնականում Հայաստանի սահմաններից դուրս՝ Ռուսաստանի, Թուրքիայի, Եվրոպայի հայաշատ քաղաքներում, գրքի հեղինակը վերարտադրել է ազգային գեղարվեստական կյանքի լայն համապատկերը՝ պատշաճ ուշադրության արժանացնելով ականավոր վարպետներ Հ. Այվազովսկու, Գ. Բաշինջաղյանի, Վ. Սուրենյանցի, Մ. Աղաջանյանի, Փ. Թերլեմեզյանի, Ե. Թադևոսյանի, Մ. Սարյանի, Վ. Գայֆեճյանի, Հ. Գյուրջյանի և այլոց ստեղծագործությանը: Նրանցից շատերը, շարունակելով իրենց գործունեությունը խորհրդային շրջանում, ոչ միայն կենդանի կապ են հաստատել սերունդների միջև, այլև ուղղակիորեն մասնակցել ազգային նորագույն կերպարվեստի ձևավորմանը:

Հարկ է նշել, որ մենագրության սույն բաժինը շարադրելիս Ա. Աղապյանն օգտագործել է գիտական շրջանառության մեջ է դրել փաստական հսկայածավալ նյութ՝ անհրաժեշտաբար բազմիցս ճշտելով նախորդ հետազոտողների աստիճանները, թվագրումները, հաղորդած այլևայլ տեղեկությունները: Սա վկայված է նաև ծանոթագրություններում, որոնց մեծ մասը վերաբերում է հատկապես այս բաժնին: Նորահայտ, անտիպ, մոռացված կամ անտեսվող աղբյուրները գործի դնելու կարողությունը գիտնականին թույլ է տվել համակարգված շարադրել Հայաստանի Առաջին հանրապետության գեղարվեստական մշակույթին նվիրված ակնարկը, որն առաջին անգամ է առանձին գլխով ներկայացվում հայ կերպարվեստի պատմության շրջանակներում:

Գրքի երկրորդ բաժնում ամփոփված է խորհրդահայ (1920-1991 թթ.) կերպարվեստի պատմությունը: Նրա զարգացման ներքին տրամաբանությամբ

յանը, առանձին փուլերի գեղարվեստական առանձնահատկություններին միանգամայն համապատասխանում է Ա. Աղասյանի նախընտրած պարբերացումը՝ 1920-1932 թթ., 1930-1950-ական թթ. և 1960-1980-ական թթ.:

Այսպես, խորհրդահայ կերպարվեստի առաջին տասներկու տարիները բնութագրվում են իբրև գաղափարագեղագիտական և ստեղծագործական ուղղությունների գոյակցության, մշակույթի բնագավառում համարձակ նախաձեռնումների և կազմակերպական նոր ձևերի, հանրապետության գեղարվեստական կյանքի ընդհանուր աշխուժացման շրջան: Իրադրությունը կտրուկ փոխվում է 1930-ական թթ. կեսերից, երբ ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի տխրահռչակ որոշումով Խորհրդային Միությունում լուծարման ենթարկվեցին գրական-գեղարվեստական բոլոր կազմակերպությունները, և խորհրդային արվեստի պաշտոնական մեթոդ հռչակվեց «սոցիալիստական ռեալիզմը»: Կուսակցական գաղափարախոսության հարկադրանքն ու քաղաքական բռնությունները հայ կերպարվեստագետների նկատմամբ, իրոք, «անդառնալի կորուստներ» (էջ 96) պատճառեցին 1930-1950-ական թթ. ազգային գեղարվեստական մշակույթին:

Այդուհանդերձ, պահպանելով գիտական անաչառությունը, զերծ մնալով նախապաշարմունքից, հեղինակը ցույց է տալիս, որ այդ շրջանում հայ կերպարվեստը հարստացավ մի շարք երևելի ձեռքբերումներով, այդ թվում՝ Ս. Առաքելյանի, Մ. Սարյանի, Գ. Գյուրջյանի, Մ. Աբեղյանի, Մ. Ասլամազյանի, Ա. Բեքարյանի, Հ. Զարդարյանի, Է. Իսաբեկյանի գեղանկարներով, Մ. Սարյանի, Մ. Արուտչյանի, Ա. Շաքարյանի թատերական ձևավորումներով, Մ. Սարյանի, Հ. Կոչոյանի, Մ. Արուտչյանի, Տ. Խաչվանքյանի, Ե. Քոչարի, Գ. Խանջյանի գրաֆիկական թերթերով, Ա. Սարգսյանի, Ս. Ստեփանյանի, Ա. Ուրարտուի, Ե. Քոչարի քանդակներով: Խորհրդահայ կերպարվեստի համատեքստում են դիտվում Հայրենական մեծ պատերազմից հետո Հայաստան ներգաղթած արվեստագետներ Ռ. Շիշմանյանի, Բ. Վարդանյանի, Պ. Կոնտուրաջյանի, Ա. Ղարիբյանի, Հ. և Ա. Գալենցի, Հ. Ասատրյանի, Գ. Ահարոնյանի, ինչպես նաև թիֆլիսաբնակ նկարիչներ Ա. Բաժբեուկ-Մելիքյանի, Հ. Կարալյանի, Գ. Գրիգորյանի (Զիոտտո), Հ. Ղարիբջանյանի ստեղծագործությունները:

Գրքի ամենաձավալուն հատվածը 1960-1980-ական թթ. կերպարվեստի պատմությանը նվիրված գլուխն է, որտեղ վերակերտված է խրուշչովյան «ձնհալի» տարիներից ի վեր աննախադեպ զարթոնք ապրած գեղարվեստական կյանքի գունեղ և խայտաբղետ պատկերը՝ իրեն ներհատուկ ժանրաթեմատիկ և ոճապլաստիկական բազմազանությամբ, գեղարվեստական հայացքների և «բարբառների» արտակարգ առատությամբ, ստեղծագործական ինքնաարտահայտման մինչ այդ աներևակայելի ազատությամբ: «Սկսած 1950-ական թթ. վերջից հայ կերպարվեստում կարևորվում են ու արժևորվում ստեղծագործ անհատի գեղարվեստական ինքնատիպ մտածողությունը, նրա աշխատանքներում արտացոլված սուբյեկտիվ ընկալումներն ու մոտեցումները, ոճական ուրույն ձեռագիրը», - նշում է Ա. Աղասյանը (էջ 129): Այս դրույթն են հաստատում տասնյակ հայ արվեստագետների՝ մենագրության տվյալ մասում գետեղված ստեղծագործական ամփոփ դիմապատկերները՝ որոշակի երկերի փայլուն վերլուծումներով, անհրաժեշտ զուգահեռներով և համեմատություններով, բանաձևի չափ հստակ սահմանումներով, որոնք ի ցույց են դնում 1960-1980-ական թթ. հայ նկարչության և քանդակագործության պատկերաբովանդակային և ոճաձևաբանական մեծ ամպլիտուդը: Ու թեպետ XX դարի երկրորդ կեսին այսպես կոչված «սարյանական գիծը» ավանդաբար մնում էր հայ գեղանկարչության զարգացման մայրուղին, «դրան գուզընթաց,- գիտնականի

խոսքով,- զարգանում էին նաև այլ ուղղություններ, որոնք կապված չէին ո՛չ սարյանական արվեստի պատկերագրության ու կերպարային բովանդակության, ո՛չ էլ սարյանական ոճի կամ կոլորիզմի հետ, թեև օժտված էին ազգային յուրահատուկ, նույնքան հարազատ ու ճանաչելի գունապլաստիկական հատկանիշներով» (էջ 137): Ըստ պարագրաֆների բաշխելով հաստոցային և մոնումենտալ գեղանկարչությունը, գրքարվեստն ու հաստոցային գրաֆիկան, մոնումենտալ, դեկորատիվ և հաստոցային քանդակն ու մանր պլաստիկան՝ հեղինակը, մեր տպավորությամբ, ընդգրկել է ժամանակաշրջանի ողջ պրոֆլեմատիկան, ներառյալ՝ արվեստների համակեցության, սինթեզի խնդիրը, չի անտեսել որևէ նշանակալի երևույթ, անուն, հուշարձան:

Մենագրությունն ավարտվում է Հայաստանի երրորդ հանրապետության, այսինքն՝ մեր օրերի գեղարվեստական կյանքի համեմատաբար համառոտ ակնարկով, որտեղ արձանագրված են վերջին տարիներին հայ կերպարվեստում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, ուրվագծված են դրա գլխավոր միտումներն ու առանձնահատկությունները, թեև ինքնին հասկանալի է՝ պատմական մոտ անցյալը հետազոտողին զրկում է վերջնական եզրահանգումներ անելու և գնահատականներ տալու հնարավորությունից: Գրքի բովանդակությանը հիանալի ներդաշնակում է նյութի մատուցման եղանակը: Աշխատությունը գրված է գիտականորեն ճշգրիտ, հղկված, նաև գեղեցիկ, պատկերավոր հայերենով: Սա ուրախալի է հատկապես այն տեսակետից, որ գիրքն ազգային նոր և նորագույն կերպարվեստի ամբողջական պատմությունը հայերեն շարադրելու անդրանիկ փորձն է: Միանգամայն արդարացված է Ա. Ադայանի փոքր-ինչ սեղմ, լակոնիկ գրելաձևը, որը բնավ չի հակասում վերլուծական մտքի խորությանն ու ճկունությանը: Համոզիչ և դիպուկ են թե՛ որոշակի երկերի, թե՛ առանձին վարպետների, թե՛ գեղարվեստական ընդհանուր երևույթների վերաբերյալ դիտողություններն ու մեկնաբանությունները: Հետազոտողը մեծապես ընդլայնել է մասնագիտական բառապաշարը՝ գործածելով արվեստագիտական եզրերի մոռացված կամ պարզապես անտեսվող, սակայն կենսունակ տարբերակները: Ակնհայտ է, որ հոմանիշների տեղին, ճկուն կիրառությունը կարող է խիստ օգտակար լինել հայալեզու արվեստագիտական տերմինաբանությանը, որը ձևավորվում է նաև նման աշխատությունների շնորհիվ:

Գիտատեղեկատվական ինքնուրույն արժեք են ներկայացնում գրքի ընդարձակ ծանոթագրություններն ու մատենագիտությունը: Դրանք լի են փաստական նյութով և կարող են օգտագործվել նաև տեքստից անկախ: Ընթերցողի գործը դյուրին է դարձնում անվանացանկը, իսկ 300-ից ավելի գունավոր վերատպություն պարունակող ալբոմը լրացնում է շարադրանքը, տեսողական տպավորություն ապահովում այնտեղ բնութագրված գրեթե յուրաքանչյուր արվեստագետի ստեղծագործության մասին: Հրատարակությունն է՛լ ավելի է շահում վերջում տեղ գտած ռուսերեն և անգլերեն հակիրճ ամփոփումների հաշվին: Ինչպես տեսնում ենք, մեր առջև հիմնարար և չափազանց բովանդակալից, պատշաճ մակարդակով ուսումնասիրություն է, որն սպառիչ լուսաբանում է XIX-XX դդ հայ կերպարվեստի անցած ուղին՝ հուսալի հիմք ստեղծելով հետազոտողների հաջորդ սերունդների համար:

ԱՎԱԳՅԱՆ Ա. Վ.

Արվեստագիտության թեկնածու